**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/154**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/154 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերով 1-ին՝ «Լաբորատոր օդաքաշ պահարան» չափաբաժնի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ:

**Փոփոխության նկարագրություն:** Էեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերով 1-ին՝ «Լաբորատոր օդաքաշ պահարան» չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի նկարագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Լաբորատոր օդաքաշ պահարան ՝ քիմիապես կայուն, ջերմակայուն և խոնավակայուն միաձույլ նյութից պատրաստված աշխատանքային մակերեսով և օդաքաշ խցիկով, որը բաղկացած է 2 գոտուց (աշխատանքային հատվածի վերևում և ներքևում)՝ ամուր կազմատվող մետաղական շրջանակի հիմքով, որը պատված է պոլիմերային ծածկույթով:

Աշխատանքային խցիկի լայնություն՝ առնվազն 1380 մմ,

Աշխատանքայինխցիկի խորություն՝ առնվազն 750 մմ,

Արտաքին չափսերը՝ ոչ ավել, քան 1530 x 760 x 2170 մմ,

Աշխատանքային մակերեսի բարձրությունը՝ 900 մմ:

Թույլատրվում է չափերի շեղում ± 3 %:

Պաշտպանիչ էկրան՝ հարվածակայուն, եռաշերտ ապակի, տեղաշարժվում է ուղղորդիչներով:

Էկրանի բարձրացումը՝ առնվազն 670 մմ:

Ստորին հատվածը ունի 3 խցիկ, որոնցից 2-ը համալրված են դարակներով, ինչպես նաև հեղուկների պահպանման պատվանդաններով: Այս 2 խցիկներից նույնպես օդը հեռացվում է:

Լուսավորությունը՝ լուսադիոդային, անջատման կոճակով առնվազն՝ 3 էլեկտրական վարդակ՝ 220Վ:

Կցաշուրթ՝ օդափոխման համակարգի միացման համար (D = 200մմ).

Էներգասնուցման ավտոմատ անջատում՝ 16 Ա:

Նշված ապրանքի երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի: Պայմանագրի կատարման փուլում լրակազմում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը:

Պահանջվող վայր մատակարարումը, տեղադրումը և մոնտաժումը մատակարարի կողմից:», որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել համապատասխան փոփոխություն՝ Օկուլյարների և հետազոտվող նյութի միջև հեռավորության կարգավորումը խնդրում ենք ընդունել առնվազն 42,0 մմ 420 մմ-ի փոխարեն»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թադևոսյանին:

Հեռախոս՝ +374 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 09)

Էլ. փոստ՝ a.tadevosyan@promotion.am

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ